

ՀՀ ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա»

գիտաարտադրական կենտրոնի բացահայտումը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, փոփոխելով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարի միջավայրի պայմանները, հանքաքարի կոնցենտրացիան, օքսիդացված և սուլֆիդային հանքանմուշների հարաբերակցությունը, պղնձի մանրէաբանական կորզման աստիճանը հնարավոր է հասցնել մոտ 90%-ի:

«Կատարված ապարագիտական հետազոտությունները թույլ են տվել բացահայտել պղնձի միներալի տարրալուծման մեխանիզմը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի օքսիդային և սուլֆիդային հանքաքարի կենսատարրալուծման տեխնոլոգիայի մշակման համար»,- ասաց գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Մետաղների կենսատարրավացման լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Նարինե Վարդանյանը:

Հետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել երիտասարդ մասնագետներ Արևիկ Վարդանյանը, Աննա Խաչատրյանը, Նելլի Աբրահամյանը և Զարուհի Մելքոնյանը:



Հետազոտությունն իրականացվել է ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բազային ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին